

ՎԵՀԱՓԱՌԻՆ ՃԱՌԸ

ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքը, արձանանում Գառնի, 13 Նոյեմբեր 1963 ին, Ազգային Ի. խանութան կազմակերպած ողջերթի թեյա-սեղանին:

Մեր այցելութիւնը Եգիպտոս տեղի ունեցաւ Երուսաղէմի 26 Հոկտեմբերի ողջագոհութեամբի և Հայ Եկեղեցւոյ միասնութեան լոյսին տակ: Այստեղ, ձեր մէջ, Եգիպտոսայն համայն հայ հաւատացեալ ժողովուրդի ծոցին մէջ, մեր հոգիին, մեր գիտակցութեան մէջ առաւել պայծառացաւ բախտորոշ և նախնական նշանակութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Խորէն Կաթողիկոսի հետ մեր հանգիստութիւնը:

Հայաստանեայց Եկեղեցին դարձաւ մէկ և անբաժան, ինչպէս ան եղած է դարեր շարունակ, Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի կամարներուն տակ ճառագայթող Լուսաւորչի անմար կանթիղի շողակաթութիւնն ներքեւ:

Հայաստանեայց Եկեղեցին, իր բոլոր նախնականութեան օրէնքներով և համայն հայ հաւատացեալ ժողովուրդով մէկ է և անբաժանելի: Երբ կը յիշենք այս ճշմարտութիւնները, պէտք է շնչառել թէ խօսքը չի վերաբերի Վազգէն կամ Խորէն Կաթողիկոսներուն, կամ մեր նախնականութեան օրէնքներէն մէկին կամ միւսին և կամ անցողական պարագաներու:

Սոսքը կը վերաբերի մօտ երկհազարամեայ մեր քրիստոնէական կեդրոն Սուրբ Էջմիածնին, որ զմեզ միաւորող և մեր լոյս հաւատքի վաւերականութիւնը ապահովող գերագոյն ոգեկան ուժն է այս աշխարհի վրայ:

Այնտեղ՝ Ս. Էջմիածնի, Արարտեան դաշտի վրայ իջաւ մեր Փրկիչը Յիսուս, Ս. Գրիգոր Լուսաւորչի լուսաշող տեսիլքով:

Այդ պատմական մեծ եղելութիւնը լոյսով լեցուց Հայաստան աշխարհը և

փայլատակեց հայ ժողովուրդի հոգին: Պայծառակերպուեցաւ մեր ազգը, իմացապէս, բարոյապէս և ոգեպէս:

Այնտեղ՝ Ս. Էջմիածնի նոյն կամարներուն տակ Ս. Մեսրոպ և Ս. Սահակ յօրինեցին և մեր ժողովուրդին ընծայեցին հայ այբուբէնը և Ս. Գրիգորը:

Այնտեղ՝ Ս. Էջմիածնէն է որ շողաց քաջն Վարդանի սուրբ վասն Յիսուսի և վասն հայրենեաց:

Եւ միշտ այնտեղ, Ս. Էջմիածնի կամարներուն տակ, դարեր շարունակ անչէջ պահպանուեցաւ հայ մշակոյթի և հայրենասիրութեան սրբազան հուրը և բազում մեծ հայրապետներ փառքի էջեր արձանագրեցին հայոց պատմութեան գրքին մէջ:

Ս. Էջմիածնի հիմքերը հաստատուած են հայոց մայր երկրի ապառաժներուն վրայ և հայ ժողովուրդի հոգիներուն մէջ:

Սուրբ Էջմիածնի հոգեւոր և ազգային առաքելութիւնը այսօր ալ պայծառ իրողութիւն մըն է: Այդ առաքելութիւնը պէտք է շարունակուի, պիտի շարունակուի և առաւել ամրապնդուի, և առաւել ամբողջական դառնայ, մանաւանդ մեր օրերուն, երբ սփռութիւն մեր զաւակները իրենց հոգեւոր-ազգային գոյութիւնը կենդանի պահելու համար կենսատու օգի և ջուրի չափ կարիք ունին իրենց պապական շրթները մերձեցնելու անմահութեան ջուրին, խմելու Ս. Էջմիածնի և վերածնած հայրենի աշխարհի կենարար զուլալ ակերէն:

Սուրբ Էջմիածնը համայն մեր ժողովուրդինն է, որ բոլորին անխտիր և հաւասարապէս կը բաշխուի իբրեւ լոյս, իբրեւ ջուր, իբրեւ հաց կենաց: Աշխարհի բոլոր ճանապարհներուն վրայ սփռուած հայ ազգի բոլոր զաւակները, բոլոր հայ եկեղեցիները Ս. Էջմիածնի աստուածային օրհնութեան ներքեւ կը գտնուին աշխարհի յաւիտեան:

Երուսաղէմի 26 Հոկտեմբերի ողջագոհութեամբ վերջ գտաւ այն անբնական կացութիւնը, այն անցողական կացութիւնը որ մեր եկեղեցին պահ մը տապալակեց և թարկեց: Տագնապը վերջ գտաւ մէկ ակնթարթի մէջ, վասնզի անբնական էր

և անհատաց, վասնզի բոլորս շատանց կը սպասէինք այդ վճռական պահուն:

Վերականգնած է այժմ և ամբողջած միասնութիւնը մեր եկեղեցիէն ներս: Մենք և իւրէն կաթողիկոս Կաթողիկոսը աչքի լոյսի պէս պահպանել այդ միութեան և սիրոյ սգին և առաւել զօրացնել զայն մեր ձեռաց զարծեցում:

Եկեղեցիէն ներս կողմեր չկան այլևս, եկեղեցիին համար, մեզի համար կողմեր չկան այլևս: Հայոց եկեղեցին մէկ է և անբաժան իր բազմադարեան կեդրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնով, Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետութեամբ և մեր նաւիրապետական միւս Աթոռներով, Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական պատմական Աթոռով, Երեսուղէմի Առաքելական Ս. Աթոռով, Կ. Պոլսոյ Աթոռով, ամէն մէկը իր իշխանութեան սահմաններով և պատմականօրէն նաւիրապետական իր իրաւասութիւններով և հեղինակութեամբ: Մայր Աթոռի կապը մեր միւս նաւիրապետական Աթոռներու և թեմերու հետ զուտ կրօնականանական է, հոգեւոր և բարոյական իմաստով, և փաստօրէն վարչական-կազմակերպչական տեսակէտէն բոլոր մեր նաւիրապետական աթոռները և թեմերը կը զեկալարուին իրենց ներքին կանոնադրութիւններով, ժողովրդավարական սկզբունքներու հիման վրայ, համաձայն պատկան պետութեանց օրէնսդրութեան տրամադրութիւններուն և տեղական պայմաններու:

Վարչակազմակերպչական որոշ շտաբով ապակեդրոնացած այս իրադրութեան մէջ, Ամենայն Հայոց Հայրապետութիւնը, Ս. Էջմիածինը, իբրեւ պատմական նաւիրական կեդրոն Հայոց քրիստոնէական հաւատքի և եկեղեցիի, իր հոգեւոր հեղինակութեամբ ու իշխանութեամբ, կ'ապահովէ և կը կենսագործէ Հայ եկեղեցիին միութիւնը և հայ հաւատացեալ ժողովուրդի հոգեւոր-բարոյական միասնութիւնը:

Մեր ողջագուրումով իւրէն Շնորհազարդ Կաթողիկոսի հետ, մեր եկեղեցիին ներքին տաղնապը վերջ գտաւ: Եւ եկե-

ղեցական կեանքը իր քնականն հունին մէջ մտաւ, եկեղեցւոյ դարաւոր կանոններու և աւանդութեանց լոյսին տակ: Բնականան և օրինական և ջերմապէս հղբայրական փոխյարաբերութիւնները վերստին կեանքի կոչուեցան Մայր Աթոռի և Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջև և այսպէսով միասնական, շինարար զարծեցութեան մը ճանապարհը բացուեցաւ մեր առջև:

Վստահ ենք թէ ինչպէս Մենք՝ նոյնպէս և Մեր հղբայրը իւրէն Կաթողիկոս, արթուն կերպով պիտի հսկենք, որպէսզի Հոկտեմբեր 26ի ոգին ամբողջաւորման մեր եկեղեցական ու ազգային կեանքէն ներս և դառնայ կենսաբեր ու պաշտօնաւոր: Մենք երկուքս և մեր միւս աթոռներու հոգեւորականները արթուն կերպով պիտի հսկենք որպէսզի ոչ մէկ կողմնակի պարագայ չթուլացնէ այդ ոգին: Այդ ոչ միայն մեր՝ գահակալներու ու խան է և նաւիրական իղձը, այլ նաև համայն մեր հաւատացեալ ժողովուրդի աղօթքը և կամքը: Եւ մենք կը խորհինք, որ եթէ պատահի նոյնիսկ որ մենք գահակալներս տկարանանք պահ մը, մեր ժողովուրդը պիտի պարտադրէ մեզի իր կամքը և պիտի չթոյլատրէ որ մենք իրարմէ բաժնուինք: Միասնութեան ոգին մենք վերջնապէս և ստուգապէս տալահովում կը տեսնենք:

Գիտենք թէ հարց տուողներ շատ կան, թէ հապա ի՞նչպէս պիտի լուծուին առկախ մնացած հարցերը: Մեր պատասխանը հետեւեալն է.

Մենք և իւրէն Կաթողիկոս համաձայնած ենք, որ այդ հարցերը պիտի լուծենք մօտ ապագային փոխադրած հասկացողութեամբ, մեր եկեղեցական կանոններու և աւանդութեանց համաձայն, հաշուի առնելով նաև առարկայական որոշ արտաքին պայմաններ: Աւելի ճշդելով ու յստակելով մեր միտքը անմիջապէս ըսենք թէ համաձայնութիւն գոյացած պէտք է նկատուի Մարտիրոս պարագայի նկատմամբ, որ Էջմիածնական թեմ է և մեր Հայրապետական Պատուիրակին, Սերովբէ Արք-

կոյիսկոպոսին անկ է դրողիլ և լուծել հոգեւոր առաջնորդով մը օժանդակ խընդիրը, եթէ այդ անհրաժեշտ նկատուի Մեր կողմէ:

Մենք ապահովութիւնը ունինք, թէ Անթիլիոսի կողմէ յայտնուած արամադութիւնը Հոկտեմբեր 26էն առաջ, գործադրութեան չի դրուիր այժմ, Հոկտեմբեր 26էն յետոյ: Այս մասին մենք ոչ մէկ կոսկած ունինք:

Յանսատանի և Պարսկաստանի թեմերը Մենք կը նկատենք անշուշտ Ս. Էջմիածնի հոգեւոր իշխանութեան ներքեւ, բայց ոչ մէկ առարկութիւն ունինք որ պէտքի աշխատող պաշտօնավարին և զեկավարին թեմակալ առաջնորդներ, որոնք կիլիկիան Աթոռի Միաբաններ են: Այս հարցի մէջ ալ Խորէն կաթողիկոս և Մենք համաձայնեցանք, որ յիշեալ թեմերու առաջնորդները իրենց հոգեւոր և բարոյական կապը պահպանեն Մայր Աթոռիս հետ և հետզհետէ ամբողջեն զայն, Հայ Եկեղեցւոյ միասնութեան ոգիով:

Ինչ կը վերաբերի Միացեալ Նահանգաց մէջ ստեղծուած կացութեան, որ մօտ երեսուն տարիներու փոքր պատմութիւն մը ունի, անշուշտ որ առայժմ պէտք է մոզթենք որ երկու բաժանեալ կողմերու փոխադարձ յարաբերութիւնները սկսին հետզհետէ կարգաւորուել ու սիրովի բլլալ, մինչև երջանիկ օր մը, երբ Մենք և Տանն Կիլիկիոյ կաթողիկոսը ժամանակը հասած նկատենք զանոնք վերամիաւորելու Ս. Էջմիածնի հոգեւոր իշխանութեան ներքեւ:

Եթէ այլ հարցեր ալ ըլլան կամ հետագային յարուցուին, վստահ ենք թէ Մենք և Կիլիկիան Աթոռը պիտի կարողանանք բարեւք լուծումներ գտնել միասնութեան և սիրոյ ոգիով: Եւ յանձնարարելի էր և յոյժ փափաքելի որ մեր եկեղեցական ներքին հարցերու լուծման ճանապարհին, մասնաւորապէս այս սկզբնական շրջանին, ոչէն կամ ձախէն միջամտութիւններ չըլլային և թողէին որ Մենք, նուիրապետական աթոռներու պատասխանատու գահակալներս, մեր մէջ լուծէինք մեր

եկեղեցական հարցերը կարգաւորական սիրով, 26 Հոկտեմբերի ողջագուրումի ոգիով: Յատկապէս արտասահմանի հայ մամուլէն է որ կը սպասենք ողջամիտ ու շրջահայեաց կեցուածք: Բաւորա պէտք է ըլլանք լայնախոհ, համբերատար և հաստատապէս լուստես:

Երբ Երուսաղէմ էինք տակաւին, Խորէն կաթողիկոսի մեկնումէն քանի մը օր յետոյ, մեզի հարցում մը ուղղեց բարեմիտ հայ եկեղեցաւոր երիտասարդ մը: Ան ըսաւ. «Վեհափառ Տէր, պիտի հրամայէ՞ք անշուշտ որ մեր կուսակցութիւնները այլեւս վերջ տան իրենց վէճերուն և իրենց դործունէութեան, և շրջանին այլեւս մեր ժողովուրդը կողմերու»:

Այս հարցումը Մենք կը կարգանք շատերու զէմքին վրայ առաւել կամ նուազ բարեմտութեամբ:

Մեր պատասխանը պիտի ըլլար հետեւեալը.

Ա. — Մեր ողջագուրումը Խորէն կաթողիկոսի հետ վերջ գրաւ եկեղեցական մեր կեանքի տաղնապին և վերահաստատեց մեր ամբողջ Եկեղեցիի ու ողջի միութիւնը կրօնական - եկեղեցական իմաստով: Արտասահմանի մեր բոլոր համայնքներու մէջ կը խորհինք թէ այս ոգին պէտք է փրկապետէ, ողջային - եկեղեցական իշխանութեանց հակակշիռ ու զեկավարութեան ներքեւ գտնուող բոլոր հաստատութիւններէ ներս, ինչպիսին են հայ կրթական և բարեսիրական և մշակութային հաստատութիւնները և միութիւնները, որոնք եկեղեցիներու կողքին կը գործեն, եկեղեցւոյ հոգեւոր իշխանութեանց հովանիին տակ:

Բ. — Մեր ողջագուրումը Խորէն կաթողիկոսի հետ, անշուշտ որ անհրաժեշտ որեւէ կապ չունի հայ հասարակական - դադարաւորական հոսանքներու և քաղաքական կուսակցութեանց գործունէութեան հետ: Այդ իմաստով և այդ ուղղութեամբ Մենք որեւէ հրաման չունինք և ոչ իսկ որեւէ թելադրանք:

Գ. — Այնուամենայնիւ սակայն, պիտի

կամենայինք իդձ մը յայտնել թէ սպասելի է և ջերմապէս փափաքելի, որ դաժարաբան և կուսակցական տարակարծութիւնները ամիւռքի հայ կեանքի մէջ հեռու մնային պայքարի ծայրայեղ արատյոցաութիւններէ և պարփակուէին մտածումի հաւատարակչութեան, իրատեսութեան և հեռատեսութեան սահմաններու մէջ, իրեւ տմուր և միակ հիմք ունենալով հայ ժողովուրդի աւական ու հիմնական շահերը և իրաւ հայրենասիրութիւնը:

Եկեղեցական և ազգային այսպիսի կեանքի պայմաններու մէջ, անտարակոյս ամիւռքի հայութիւնը առաւել յաջողութեամբ պիտի կարողանայ կազմակերպել այն սրբազան և փրկարար գործը, որ կը կոչենք հայապահպանում: Սուրբ Էջմիածինը միշտ ազօթող պիտի մնայ հայապահպանման սուրբ գործի լիակատար յաջողութեան համար:

Թող Աստուած օրհնէ մեր եկեղեցին և մեր բոլոր նաւիրապետական ամսաները և համայն մեր հաւատացեալ ժողովուրդը:

Թող Աստուած օրհնէ եգիպտահայ հաւատաւոր բոլոր մեր զաւակները: Թող չէն ու հաստատ մնան ձեր եկեղեցիները, ձեր կրթական հաստատութիւնները և մշակութային միութիւնները:

Թող խաղաղութեան և բարօրութեան մէջ յաւէտ ապրի ու ծաղկի այս սքանչելի երկիրը եգիպտոս և անոր ազնիւ ու շարքաշ ժողովուրդը:

Ողջ լինւեք, զօրացեալ Ս. Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ՝ և ի մէնջ. ամէն:

ՄԵԾ ՈՒՆՏԱԻՈՐԸ

Մարդկային հոգին յաճախ կարօտը ունի գեղեցիկ ապրումներու, վայելքներու: Հոգեկան վայելքներու, գեղեցիկ ապրումներու բացառիկ առիթ մը կը տա Վեհափառ Վազգէն Հայրապետին ուխտաւարութեան շրջանը Հայկական Սիանի բարձունքին: Մանաւանդ ազգային հպարտութեան առիթ մը ևս, հայրենի հողէն կտրուած, աշխարհի չորս ծագերուն ցրուած հայերուն համար:

Արդարեւ՝ մեր նախնի Հայրապետներուն արժանիքները իր մէջ բերեղացուցած Հայրապետը, Յարգանանի Պետական և Ժողովրդային շրջանակի արքայավայել ընդունելութիւնէն յետոյ, խից բոլորէն, առանց ցեղի և կրօնքի խտրութեան, բացառիկ յարգանք և սրտազեղ պաշտամունք: Ան ոչ միայն արժանաւորապէս բազմած է Լուսաւորչի Հայրապետական Դահլիճ վրայ, այլ բազմած է նաեւ ամէն մէկ Հայ Հոգիի Բարձունքին վրայ:

Անոր վեհափառ ներկայութիւնը ամենաւերք, Ս. Էջմիածնի կենտրոն շուրջը բերաւ արտասահմանի հայութեան և Մասիաներու խոյանքին հպարտ քաղցրութիւնը...

Հոկտեմբերի տասներինը. — Մեծ Ուխտաւորը, Ն. Ս. Ս. Ս. Վազգէն Ա. Հայրապետը, իր առաջին այցելութիւնը պիտի տար Ս. Յարութեան Տաճարին, և իր ուխտը պիտի կատարէր:

Վեհաշուք Թափօրը կը շարժի Ս. Յակոբայ մեծ դռունէն: Վեհափառ Հայրապետի կազմին է երեսուղէմի Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Եղիշէ Արքեպս. իր չուրջն են տասը եպիսկոպոսներ, Վարդապետական դասը, Սարկաւազներ, Ժառանգաւորներ, պետական-գինուարական ջոկատը, Սկստաւական կազմը և բազմահազար ժողովուրդ: «Հրաշափառ» ի նշխաններուն տակ, պատկառազեղ Թափօրը կը քալէ դանդաղ և վեհաշուք:

Գարգապատ ճամբաներէն, զարգարուած